

պատրաստել է մի կարևոր աշխատութիւն — Ավուա-  
նից պատմութիւնն սկզբից մինչև մեր դարը, ալդ երկը  
որքան մեզ լայտնի է, մօտ է իւր վախճանին և ալժմս  
ս. հեղինակը պատրաստում է Աղուանից աշխարհի ըն-  
դարձակ և մանրամասն քարտէսը:

— Հանդիսիս աշխատակից պ. Ն. Քարամեանը  
երկասիրելով Վինագրադովի լալտնի եռահատոր Յնդ-  
հանուր պատմութեան հալ թարգմանութիւնը՝ լանձնել  
է ս. Եջմիածնի տպարանին: Մեզ հաղորդում են,  
որ տպարանը ձեռնարկելու է նորա տպագրութեան ներ-  
նայ յունուար ամսից:

— Անցեալ 1899 թուին լոյս տեսաւ մեր հրա-  
տարակութեամբ «Փյօնան Ջայոց պատմութեան» ժողո-  
վածուի Դ. գիրքը: Այդ հատորը նուիրուած է բացա-  
ռապէս Ղուկաս կաթողիկոսի ժամանակին՝ 1780—  
1800 թ. գրքին կցուած է Դ. կաթողիկոսի ինքնագիր  
կոնդակի մի վիմատիպ պատճէն և հայրապետիս լու-  
սանկարը: — Ներկարումս Հրատարակչը պատրաստել է  
Դիւանի Ե. գիրքը, որ կպարունակէ Դաւիթ կաթուղի-  
կոսի գրագրութիւնները:

— Առաջիմ որպէս լուր կարող ենք հաղորդել, որ  
գիտաւորութիւն կալ առաջիկալ տարուանից հրատարա-  
կել Պ. Բուրգում մի նոր, զուտ գեղարուեստական  
հանդէս «Ավիսուըեան» անունով:

## ՔԻՉ ՄԱԼ ԸՆՈՒՃԵՂԻՆ:

Նոր տարի և ծնունդ կը մօտենան:

Ամեն մարդ կը պատրաստուի անուշ ուտելու:

Ամեն տուն առաւել կամ նուազ իրարանցում կալ  
անուշի համար:

Զկալ կնիկ մ'որ, Երիկը դուրս ելնալէն ետքը, գլու-  
խը պատուհանէն դուրս չերկնցնէ և չպօռալ.

— Նաքարը չմոռնաս... նալէ որ կանաչ ըլլալ աղաճ  
քավունին, վրան խորդ ու բորդ չըլլալ:

— Նատ աղէկ:

— Չմոռնաս հա:

— Չեմ մոռնար:

Միալն հագուստի մասին չէ որ կանալք կը մրցին  
իրարու հետ. անուշեղէնի մէջ ալ զիրար գերազանցել  
կուզեն և զիրար գերազանցելու փափաքով անանկ ա-  
նուշ կեփեն որ կամ քար կը կտրի կամ ջուր և լետոյ  
կարդարանան ըսելով.

— Կրակը շատիշեկաւ:

— Նաքարը քիչ եկաւ:

— Նատ խալնաթմիշ ըրինք:

— Չէ քա, քիչ խալնամիշ եղաւ:

— Աղաճ քավունին աղէկ չեր:

— Չէվիրմէ ընելու էինք:

Անոնք թող արդարանան, բայց մենք Բնչ լնենք  
որ ժամերով կաշխատինք կտոր մը անուշ քաղելու հա-  
մար անուշի քեասէյէն: Ապարաժի պէս կարծը չէվիրմէ-  
մը կը հրամցնեն քեզի և արծաթեալ դիւրաթեք դգալ  
մ'ալ կուտան ձեռքդ որ անուշ ուտես:

— Հրամմեցէք:

Հրամմէ ու կերնալիմ:

Բահ և բրիչ չկալ որ քեասէն փորես, հերկես և  
քիչ մը բան հնձես, դգալով երկիր կը մշակնւի, Կաշ-  
խատիս, քեասէն ասդին՝ կը դարձնես, անդին կըդար-  
ձնես, դգալն անդին կըտանիս, ասդին կը բերես, կը  
նեղանաս, կը քրտնիս և ալս միջոցին տան տէրն ալ  
կը թախանձէ որ դգալդ լեցունես.

— Նատկեկ առէք, շատկէկ առէք, անուշնիս աղէկ է:

— Նատ աղէկ է:

Եռդոքորթութիւն ալ ընելու է:

— Նատերը սուլու կընեն, խօլին աղէկ կըլլալ, մենք  
միշտ խօլի կընենք:

— Նատ աղէկ կընէք:

— Սուլուն ալ ապուրի՝ պէս բան մը կըլլալ կոր,  
մենք վարժուած չենք ու չենք կընար ուտել: Թագու.  
հի տուտուն որ առաջին կարգի անուշ կեփէ, միշտ  
խօլի կը շինէ:

Դուն տակաւին կաշխատիս որ քիչ մը բան փրցնես:

— Ինչու համար չէք կընար կոր առներ:

— Կառնեմ կոր, կառնեմ կոր, կամաց կամաց:

Դգալին մէկը կը ծոփ, կը ձգես զալն ուրիշ մը  
կառնես և կսկսիս փորել:

— Խօլի չէք ախորժիլ դուք:

— Կախորժիմ:

Վերջապէս պարապ դգալը բերանդ տանելով կը  
բարեմաղթես.

— Ենորհաւոր ծնունդ և բարի կաղանդ:

— Ողջ եղէք:

Անկից կելնես ուրիշ տուն մը կերթաս:

— Հրամեցէք, աղաճ քավունի է... լեցուցէք ձեր  
դգալը:

Աս ալ բոլորովին ջուր է: Ինչ որ է տրամադրու.  
թիւն ունի գոնէ դգալի մէջ մտնելու: Դգալ մը կը  
լեցնես և վրադ կաթեցընելով կամ կէսը վրադ թափե.  
լով կէսն ալ բերանդ կը թափես:

— Վրադ թափեցիր:

— Վնաս չունի:

— Նատերը խօլի կը շինեն կոր այս անուշը. մենք,  
ինչ գիտնամ, վարժուած չենք տէ, կիւճերնիս կուգալ  
անուշնիս խօլի ըլլալ նէ:

— Խոլին աղէկ չըլլար:

— Քաթրէկ տուտուն որ մէկ հատիկ անուշ շինող է — միշտ սուլու կեփէ: Անուշն ալ քիչ մը սուլու ըլլալու է, անանկ չէ մի, բնչ գիտնամ:

— Անանկ է անանկ, տէր ողորմեա, ինչու անանկ չըլլալ, սուլուն աղէկ է.

Կը խնդրեմ, տիկիններ, այս տարի քիչ մ'ուշադրութեամբ եփեցէք ձեր անուշներն, որպէս զի գոհ ըլլան հիւրերը, Ես անուշի սիրահարներէն չեմ, բայց կուտեմ երբ հրամցնեն, Այսուամենալինիւ գող կը բըռնէ զիս երբ գգալը ձեռքս առնեմ, որովհետև կանխաւ կզգամ որ գործին մէջէն չպիտի կընամ ելնել, ասոր համար շատ անգամներ, անոյշ ուտելու ախորժակ ունեցած ժամանակս անգամ, ակռայիս կը դպչի ըսելով կը հրաժարակիմ ուտելէ: Ուստի գարձեալ կը խնդրեմ, այս տարի քիչ մ'աւելի խնամով եփեցէք որ այցելուք գոհ հութեամբ մեկնին և, ուր որ երթան, գովեստիւք խօսին ձեր անուշին վրայ: Կին մը շատ անգամ իւր շինած անուշէն կը դատուի: Աղէկ անուշեղէն եփող կին մը անպատճառ տանտիկին և կարգապահ կնիկ մ'է:

Ձեզ տեսնեմ:

Յ. ՊԱՐՈՆԻԱՆ

(Խիկար. 1887)

## ԱԽԱԼՔԸԼԱՔԻ ԾՂԵՏԸ

Անցեալ դեկտ. 19-ին, ցերեկուայ 2 ժ. 5 լոպէին երկրաշրժ եղաւ Թիֆլիզում և գաւառներում. բայց ամենից ծանր եղել է Սխալըալար քաղաքի շրջակայքում, ուր ստորերկրեայ հարուածներն այնքան զօրեղ են եղել, որ բաղաքի տներից շատերը ճեղքոտուիլ են, նորա գաւառում վնասուել են 12 գիւղեր (Կարնոյ գաւառից գաղ-